




ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1 ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ ...	3
1.1 ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ	3
1.2 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	5
2 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	9
2.1 ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ.....	12
3 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	24
3.1 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	25
3.2 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ	26
4 ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	27
5 ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	31
7 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔ	33

1 ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ

1.1 ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ

2015թ. ՀՆԱ կազմել է 5047.5 մլրդ դրամ, աճը 2014թ. նկատմամբ՝ 3.0%:

Համեմատության համար նշենք, որ 2015թ. ԵԱՏՄ երկրներից Ղրղզստանում ՀՆԱ աճը կազմել է 3.5%. իսկ Ղազախստանում՝ 1.2%, Բելառուսում նվազել է 3.9%-ով, Ռուսաստանում՝ 3.7%-ով: Հարևան երկրներից Վրաստանում ՀՆԱ աճը կազմել է 2.8%, իսկ ԵՄ երկրներից Գերմանիայում՝ 1.7%, Բելգիայում՝ 1.4%, Ֆրանսիայում՝ 1.2%, Դանիայում՝ 1.2%, Ավստրիայում՝ 0.9% և Իտալիայում՝ 0.8%: Շվեդիայում և Լեհաստանում ՀՆԱ աճը կազմել է համապատասխանաբար 4.1% և 3.6%:




	2012	2013	2014	2015
Համախառն ներքին արդյունք, մլրդ դրամ	4266.5	4555.6	4843.2	5047.5
Համախառն ներքին արդյունք, մլն ԱՄՆ դոլար	10619	11121	11644	10561
ՀՆԱ մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	3512.0	3680.0	3864.0	3515.0
ՀՆԱ մեկ շնչի հաշվով, PPP ԱՄՆ դոլար*	5921.9	6190.7	7365.0	8433
ՀՆԱ ինդեքս-դեֆլյատոր, %	98.8	103.2	102.4	101.2

* IMF WEO տվյալների բազա,

2010թ. համեմատ 2015թ. ՀՆԱ աճել է 57.2%-ով, այդ թվում՝ գյուղատնտեսությունը՝ 95.9%, արդյունաբերությունը՝ 63.2%, առևտուրը՝ 33.7% և ծառայությունները՝ 36.3%, իսկ շինարարությունը նվազել է 21.8%-ով:

ՀՆԱ աճի տեմպի դանդաղումը հիմնականում պայմանավորված է շինարարության և զուտ հարկերի համապատասխանաբար՝ 4.2% և 5.1% նվազմամբ, նշված ճյուղերի նպաստման չափը ՀՆԱ հավելածին կազմել է համապատասխանաբար՝ 0.4 և -0.6 տոկոսային կետ:



ՀՆԱ կառուցվածք, 2014-2015թթ. %



ՀՆԱ աճին ամենամեծ դրական նպաստումն ունեցել են գյուղատնտեսությունը՝ 2.1 տոկոսային կետ (աճը՝ 11.4%) և արդյունաբերությունը՝ 1.0 տոկոսային կետ (աճը՝ 6.3%): ՀՆԱ աճին դրական նպաստում են ունեցել նաև առևտուրը և ծառայությունները՝ 0.6 տոկոսային կետ (աճը՝ 1.1%):

Տնտեսական գործունեության առանձին տեսակների թողարկման ծավալների և ավելացված արժեքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ավելացված արժեքի աճի տեմպի դանդաղումը հիմնականում պայմանավորված է միջանկյալ սպառման աճով:



	Թողարկում			Միջանկյալ սպառում		
	2014	2015	Աճ, %	2014	2015	Աճ, %
Գյուղատնտեսություն	1335.9	1351.1	11.7	438.9	478.0	10.3
Արդյունաբերություն	1554.7	1638.4	5.2	769.5	814.8	4.8
Շինարարություն	845.1	890.0	0.3	401.3	417.6	4.2
Առևտուր	796.4	765.3	-8.0	229.4	217.7	-7.5
Ծառայություններ	2321.5	2488.0	2.7	714.5	692.8	-6.0

Մասնավորապես միջանկյալ սպառման աճ է գրանցվել արդյունաբերությունում, գյուղատնտեսությունում և շինարարությունում:

Ըստ եռամսյակների 2015թ. ՀՆԱ ամենաբարձր աճ արձանագրվել է երկրորդ եռամսյակում գերազանցելով նախորդ տարվա նույն ժ/2 ցուցանիշին: Մյուս եռամսյակներում ՀՆԱ աճի տեմպը, լինելով դրական, զիջել է նախորդ տարվա համապատասխան ժ/2 ցուցանիշին: Երկրորդ եռամսյակում ՀՆԱ 4.5% աճը պայմանավորված է եղել գյուղատնտեսության 22.8% և արդյունաբերության 10.3% աճերով, ի հակադրություն 2014թ. երկրորդ եռամսյակի, որում գրանցվել էր արդյունաբերության և գյուղատնտեսության ավելացված արժեքների ծավալի նվազում համապատասխանաբար՝ 0.8% և 0.1%-ով:



	Ճյուղերի ավելացված արժեքների աճ, %			
	I	II	III	IV
Արդյունաբերություն	2.4	10.3	10.3	2.7
Գյուղատնտեսություն	6.9	22.8	5.6	17.0
Շինարարություն	1.1	-3.3	4.5	-11.0
Առևտուր և ծառայություններ	0.9	2.5	1.0	0.4
ՖՄԱԶԾ	-11.8	-4.4	-16.7	-16.6
Զուտ հարկեր	-2.9	-8.9	-2.9	-5.6

Ըստ ՀՆԱ հիմնական ծախսային բաղադրիչների 2015թ. վերջնական սպառման ծախսերը, համախառն կուտակումը և ներմուծումը 2014 նույն ժ/շ համեմատ կրճատվել են, համապատասխանաբար 6.5%, 5.1% և 16.3%-ով: Ընդ որում, բոլոր եռամսյակների ընթացքում էլ վերը նշված բաղադրիչների աճի տեմպերն ավելի ցածր են եղել 2014թ. համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշներից:


ՀՆԱ օգտագործման եղանակով բաղադրիչների աճ, %

	2014-Q1	2014-Q2	2014-Q3	2014-Q4	2014/2013	2015-Q1	2015-Q2	2015-Q3	2015-Q4	2015/2014
Վերջնական սպառման ծախսեր	-1.8	-2.2	3.5	3.7	1.1	-1.9	-1.1	-9.3	-10.6	-6.5
Համախառն կուտակում	3.6	-2.3	7.1	-9.8	-2.6	-3.2	-9.1	-11.2	0.8	-5.1
արտահանում	30.9	21.2	27.3	13.3	6.4	-4.6	14.2	5.4	3.7	4.9
ներմուծում	2.7	8.3	18.7	1.5	-1.0	-16.9	-16.2	-18.2	-14.0	-16.3

Վերջնական սպառման ծախսերը 2015թ. բոլոր եռամսյակներում նվազել է: 2015թ. տարեկան ցուցանիշը նվազել է 6.5%-ով, որի հիմնական պատճառը տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների վերջնական սպառման ծախսերի, համապատասխանաբար՝ 7.9% և 12.2% նվազումն է: Նախորդ տարվա համեմատ խորացել են համախառն կուտակման և ներմուծման նվազումները: Արտահանման գծով գրանցվել է աճ:

1.2 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ

2015 թվականի հունվար-դեկտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 3.1%: 2015թ. դեկտեմբերը 2014թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 0.7%, իսկ դեկտեմբերը նոյեմբերի նկատմամբ՝ 20.4%:




Տնտեսական ակտիվության ցուցանիշի աճին նպաստել են բոլոր ճյուղերը, բացառությամբ՝ առևտրի շրջանառությանը, որը նվազել է 8.0%-ով: Գյուղատնտեսության աճը կազմել է 11.7%, արդյունաբերությանը՝ 5.2%, ծառայություններինը՝ 2.7%, իսկ շինարարությանը՝ 0.3%:

- **Արդյունաբերություն:** Հանքագործական արդյունաբերության աճը կազմել է 50.4%, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը՝ 6.7%, իսկ ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակմանը 10.1%: Մշակող արդյունաբերության թողարկման ծավալը նվազել է 5.6%-ով (առավել մանրամասն տես «2. Արդյունաբերություն» բաժնում):

2015թ. 2010թ. համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 1.4 անգամ, հանքագործական արդյունաբերությանը՝ 1.9 անգամ, մշակող արդյունաբերությանը՝ 1.3 անգամ, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը՝ 1.5 անգամ, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակմանը՝ 1.4 անգամ (առավել մանրամասն արդյունաբերություն բաժնում):

- **Գյուղատնտեսություն և ձկնաբուծություն:** Գյուղատնտեսության 11.7% աճին նպաստել են բուսաբուծության 15.2% (գյուղատնտեսության կառուցվածքում՝ 60.5%) և անասնաբուծության 6.1% (գյուղատնտեսության կառուցվածքում՝ 39.5%) աճերը: «Ձկնորսություն» ենթաճյուղում աճը կազմել է 6.4%: 2010թ. համեմատ 2015թ. գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքի ծավալը ավելացել է 24.9%-ով:

Գյուղատնտեսության կառուցվածքում գերակշիռ մասը կազմող բուսաբուծության ենթաճյուղի աճը պայմանավորված է 2015թ. ընդհանուր առմամբ բարենպաստ բնակլիմայական պայմաններով, պետական աջակցությամբ իրականացված ծրագրերով, ցանքատարածությունների և վարելահողերի ավելացմամբ, ջերմոցային տնտեսությունների ավելացմամբ: Անասնաբուծության ոլորտում նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 6.1%: Ձկնաբուծության աճը կազմել է 6.4%:





Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 351.8 հազ. հա՝ նախորդ տարվա 332.8 հազ. հա-ի համեմատ՝ ավելանալով 19 հազ. հա (5.7% աճ): Ավելացել են հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 201.3 հազ. հա (6.7% աճ), կարտոֆիլինը՝ 33.3 հազ. հա (5.4% աճ), բանջարանոցային մշակաբույսերինը՝ 29.1 հազ. հա (10.2% աճ), բոստանային մշակաբույսերինը՝ 6.8 հազ. հա (17.2% աճ), կերային մշակաբույսերինը՝ 78.2 հազ. հա (1.4% աճ): Տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 3.1 հազ. հա, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 3.1%-ով:

- **Շինարարություն:** 2014թ. համեմատ շինարարության աճը կազմել է 0.3%: 2010թ. համեմատ 2015թ. շինարարության ծավալները նվազել են 21.0%-ով:




Ըստ ֆինանսավորման աղբյուրների իրականացված շինարարության ծավալների 73.0% աճ է գրանցվել մարդասիրական օգնության, 20.5% միջազգային վարկերի և 1.5% բնակչության միջոցների հաշվին: Համայնքների միջոցներով իրականացված շինարարության ծավալները նվազել են 56.2%-ով, կազմակերպությունների միջոցներովը՝ 0.8%-ով և պետական բյուջեի միջոցներովը՝ 0.6%-ով:



Ըստ տնտեսական գործունեության տեսակների շինարարության 2.6 անգամ աճ է գրանցվել «մշակույթ, զվարճություններ և հանգիստ», 87.7%՝ «վարչարարական և օժանդակ գործունեություն» 61.9%՝ «գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն», 44.0% «սպասարկման այլ ծառայություններ», 15.2%՝ «կացության և հանրային սննդի կազմակերպում», 10.1% «անշարժ գույքի հետ կապված գործունեություն», 6.5% «մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում» տեսակներում:

- Առևտուր և ծառայություններ:** 2015 թվականին առևտրի շրջանառությունը կազմել է 2282.3 մլրդ դրամ՝ 2014թ. համեմատ նվազելով 8.0%-ով: Առևտրի շրջանառության նվազումը հիմնականում պայմանավորված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած ոչ առևտրային բնույթի փոխանցումների նվազմամբ, ինչպես նաև դոլարի փոխարժեքի տատանումների հետ կապված բնակչության սպասողական վարքագծով:




Չնայած առևտրի ցուցանիշների նվազմանը՝ 2015թ. բացվել են նոր՝ 1120 առևտրի օբյեկտներ: 2015թ. տարեվերջին առևտրի օբյեկտների թիվը կազմել է 17762՝ ապահովելով 6.7% աճ: 2010թ. համեմատ 2015թ. առևտրի շրջանառությունն աճել է 28.3%-ով:

Ծառայություններում շարունակում են գերակշռել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «մշակույթ, զվարճություններ և հանգիստ», «կացության և հանրային սննդի կազմակերպում» և «տեղեկատվություն և կապի», «տրանսպորտի» ծառայությունների տեսակները, որոնց տեսակարար կշիռը կազմել է ընդհանուր ծառայությունների 76.3%-ը: 2010թ. համեմատ 2015թ. ծառայությունների ծավալն աճել է 1.5 անգամ:

2 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական առումով տարին դժվար էր, ինչը պայմանավորված էր մի շարք գործոններով և իրողություններով, մասնավորապես՝ ռուսական շուկայի և ռուբլու արժույթի անկայուն վիճակը, միջազգային շուկայում գունավոր մետաղների գների անկումը, ներքին շուկայում արդյունաբերական արտադրանքի ներքին պահանջարկի նվազումը, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության արդյունքում սկզբնական շրջանում նոր իրավական դաշտին և պայմաններին տնտեսվարողների հարմարվելը և սպասողական իրավիճակը:

Վերը թվարկված գործոնները բացասաբար են անդրադարձել արդյունաբերության վրա, սակայն անգամ այս պայմաններում 2015թ. արդյունաբերության աճը կազմել է 5.2%:



Այս տեսանկյունից հարկ է նշել, որ աճը պայմանավորված է նաև նոր ընկերությունների գործարկմամբ, մասնավորապես՝ հանքարդյունաբերության, բժշկական սարքավորումների արտադրության, գարեջրի արտադրության և այլ ոլորտներում, ինչը այս պայմաններում նույնպես ձեռքբերում կարելի է համարել:

Մշակող արդյունաբերություն: Արդյունաբերության կառուցվածքում տեսակարար կշիռը կազմել է 61.9%, արտադրության ծավալը 2014թ. համեմատ նվազել է 5.6%-ով (առավել մանրամասն կներկայացվի «2.1 «Մշակող արդյունաբերություն»» բաժնում):

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում: Արդյունաբերության կառուցվածքում տեսակարար կշիռը կազմել է 16.7%: Ենթաճյուղի արտադրության ծավալը 2014թ. համեմատությամբ աճել է 50.4%-ով: Աճը պայմանավորված է ենթաճյուղում 16.3% տեսակարար կշիռ ունեցող «մետաղական հանքաքարի արդյունահանում» ենթախմբի 51.5% և 0.4% տեսակարար կշիռ ունեցող «հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր» ենթախմբի 5.7% աճերով (առավել մանրամասն կներկայացվի «2.2 «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում»» բաժնում):

Էլեկտրաէներգիայի, գազի, գույրշու և լավորակ օդի մատակարարում: Ամբողջ արդյունաբերության կառուցվածքում տեսակարար կշիռը կազմում է 19.9%: Ենթաճյուղի արտադրության ծավալը 2014թ. համեմատ աճել է 6.7%-ով:


Աճը պայմանավորված է ենթաճյուղում 73.6% տեսակարար կշիռ ունեցող «Էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդում և բաշխում» ենթախմբի 5.5% և 26.4% տեսակարար կշիռ ունեցող «գազի արտադրություն, գազակերպ վառելիքի բաշխում գազամատակարարման համակարգի միջոցով» ենթախմբի 12.7% աճերով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում: Արդյունաբերության կառուցվածքում տեսակարար կշիռը կազմում է 1.6%: Ենթաճյուղի արտադրության ծավալը 2014թ. համեմատությամբ աճել է 10.1%-ով:


2015թ. արդյունաբերական արտադրանքի արտահանումը կազմել է իրացման 39.2%, 2010թ.՝ 34.8%-ի դիմաց: Հանքագործական ոլորտի արտահանումը կազմել է իրացման 84.4%-ը, 2010թ.՝ 61.5%-ի դիմաց, իսկ մշակող արդյունաբերությանը՝ 37.5%, 2010թ.՝ 36.7%-ի դիմաց: Արդյունաբերական արտադրանքի արտահանման կառուցվածքում 2015թ. 2010թ. համեմատ աճել է այլ երկրների մասնաբաժինը և կրճատվել ԱՊՀ երկրների մասնաբաժինը:

Հաշվետու տարում արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների վրա իրենց բացասական ազդեցությունն են ունեցել համաշխարհային շուկայում մետաղների գների նվազումը (պղինձ, մոլիբդեն, ալյումին), ինչպես նաև ռուսական ռուբլու հիմնական տարադրամների նկատմամբ արժեզրկումը:

Պղինձի և մոլիբդենի միջին գների աճ, 2015թ.,%




Արդյունաբերական արտադրանքի արտահանման կառուցվածքն ըստ երկրների, %



Արդյունաբերության վարկավորումը 2015թ. առևտրային բանկերի կողմից կազմել է 375.1 մլրդ ՀՀ դրամ (կազմում է տնտեսության ընդհանուր վարկավորման 19.4%-ը), որի 83.0%-ը արտարժույթով տրված վարկերն են, իսկ 17.0%-ը՝ ՀՀ դրամով: 2014թ. համեմատ 2015թ. արդյունաբերության վարկավորումը նվազել է 12.6%-ով: Նվազում գրանցվել է արդյունաբերության բոլոր խոշոր ճյուղերում:


2014թ. համեմատ 2015թ. մշակող արդյունաբերության վարկավորումը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 12.4%-ով, «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ճյուղինը՝ 4.8%-ով, «հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» ճյուղինը՝ 23.3%-ով, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ճյուղինը՝ 12.3%-ով:

Արդյունաբերության վարկավորման կառուցվածքը, %



- Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում
- Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում
- Մշակող արդյունաբերություն
- Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում

Արդյունաբերության վարկավորման աճ, %



Արդյունաբերության ոլորտում ներդրումային հոսքերի ծավալը 2015թ. կազմել է 100.3 մլրդ դրամ, որից ուղղակի՝ 75.8 մլրդ դրամ, 2014թ., համապատասխանաբար՝ 127.0 և 75.7 մլրդ դրամի դիմաց:


Ըստ ենթաճյուղերի հիմնականում ուղղվել են՝

- «Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր»՝ 56.5 մլրդ դրամ (նախորդ տարվա համեմատ աճել է գրեթե 6 անգամ), որից ուղղակի ներդրումներ՝ 26.5 մլրդ դրամ (նախորդ տարվա համեմատ աճել է գրեթե 1.6 անգամ): Խոշոր ներդրող երկրներ են՝ Շվեյցարիան՝ 43.7 մլրդ դրամ և Գերմանիան՝ 12.3 մլրդ դրամ:
- «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» մոտ 51.0 մլրդ դրամ (նախորդ տարվա համեմատ աճել է 72.9%-ով), որից ուղղակի ներդրումներ՝ 56.9 մլրդ դրամ: Խոշոր ներդրող երկրներ են Լյուքսեմբուրգը՝ 27.3 մլրդ դրամ, իսկ ՌԴ-ի ներդրումը կազմել է 16.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 1.2 մլրդ դրամով:
- «Խմիչքների արտադրություն»՝ 11.7 մլրդ դրամ (նախորդ տարվա համեմատ նվազել է 40.0%-ով), որից ուղղակի ներդրումներ՝ 11.6 մլրդ դրամ: Խոշոր ներդրող երկրներ են՝ Ֆրանսիան՝ 6.9 մլրդ դրամ, Միացիալ Թագավորությունը՝ 3.7 մլրդ դրամ և Լյուքսեմբուրգ՝ 1.1 մլրդ դրամ:

- «Դեղագործական արտադրանքի արտադրություն»՝ 5.7 մլրդ դրամ, (նախորդ տարվա համեմատ աճել է 11.4 անգամ), որից ուղղակի ներդրումներ՝ 6.1 մլրդ դրամ: Խոշոր ներդրող երկիր է ՌԴ-ն՝ 6.1 մլրդ դրամ:
- «Զրի հավաքում, մշակում և բաշխում»՝ 1.7 մլրդ դրամ (նախորդ տարվա համեմատ աճել է 5.7 անգամ), միակ ներդրող երկիրն է Ֆրանսիան՝ 1.7 մլրդ դրամ:

2.1 ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մշակող արդյունաբերության 5.6% նվազումը պայմանավորված է «սննդամթերքի արտադրության» 9.0% (մշակող արդյունաբերության կառուցվածքում 35.0%), «հիմնային մետաղների արտադրության» 15.0% (կառուցվածքում 18.7%), «խմիչքների արտադրության» 19.7% (կառուցվածքում 12.5%), «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության» 16.2% (կառուցվածքում 5.3%) և «ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրության» 9.1% (կառուցվածքում 3.0%) նվազումներով:





Ի հակադրություն բացասաբար ազդած ենթաճյուղերի՝ մշակող արդյունաբերության աճին դրական ազդեցություն են ունեցել հետևյալ ենթաճյուղերը՝ «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն»՝ 49.1% աճ (կառուցվածքում 7.2%), «թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն»՝ 17.2% աճ (կառուցվածքում 1.5%), «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն»՝ 10.3% աճ (կառուցվածքում 0.7%) «հագուստի արտադրություն»՝ 16.8% աճ (կառուցվածքում 0.7%), «դեղագործական արտադրանքի արտադրություն»՝ 25.1% աճ (կառուցվածքում 0.6%):

Ենթաճյուղերի ցուցանիշների դինամիկայի վերլուծությունը տալիս է հետևյալ պատկերը՝

- **ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Նախորդ տարվա աճի տեմպերի համեմատ 2015թ. գրանցվել է արտադրության ծավալների 9.0% նվազում: Սննդամթերքի արտադրության ենթաճյուղի արտադրանքի 94.3%-ը սպառվել է ներքին շուկայում,

հետևապես ենթաճյուղում գրանցված նվազումները հիմնականում պայմանավորված են ներքին շուկայում տեղի ունեցած փոփոխություններով:



Սննդամթերքի արտադրության ենթաճյուղերի դիտարկումը ցույց է տալիս, որ առավելապես մեծ տեսակարար կշիռ ունեցող «հացի և ալյուրե հրուշակեղեն» ենթաճյուղում գրանցվել է 2.5% աճ, սակայն վերջինս չեզոքացվել է մնացած ենթաճյուղերում գրանցված նվազումներով: Ըստ 2015թ. կառուցվածքում մասնաբաժնի նվազման հաջորդականության «կաթնամթերքի արտադրություն» ենթաճյուղում գրանցվել է 4.0%, «ալրաղաց արդյունաբերության, օսլայի և օսլա պարունակող մթերքի արտադրությունում»՝ 12.5%, «մսի մշակում, պահածոյացում, մսամթերքի արտադրությունում»՝ 13.3% նվազում: Սննդամթերքի արտադրության կառուցվածքում գումարային 1.1% մասնաբաժին ունեցող մնացած ենթաճյուղերի («ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակում և պահածոյացում», «բուսական և կենդանական յուղերի և ճարպերի արտադրություն», «պատրաստի անասնակերի արտադրություն») գումարային բացասական նպաստումը կազմել է 0.5 տոկոսային կետ:

- **Մսի մշակում, պահածոյացում, մսամթերքի արտադրություն:** Ենթաճյուղին բացասաբար են նպաստել «ընտանի թռչունների մսի մշակում և պահածոյացում» ենթաճյուղի 21.1% նվազումը («մսի մշակում և պահածոյացում» ենթաճյուղում գրանցվել է 23.5% աճ):

Բնեղեն արտահայտությամբ թռչնամսի ծավալներն աճել են 10.2%-ով: 2015թ. 2014թ. համեմատ թռչնի մսի գինը նվազել է 3.7%-ով:

Թռչնամսին ամբողջությամբ սպառվել է ներքին շուկայում (իրացումը նվազել է 27.9%-ով): «Մսի մշակում, պահածոյացում» ենթաճյուղի արտադրանքի ներքին շուկայում իրացման ծավալներն աճել են 14.0%-ով, արտահանումը դեպի ԱՊՀ երկրներ նվազել է 21.6%-ով, Այլ երկրներ՝ աճել է 13.1%-ով:

- Ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակում և պահածոյացում:** Ենթաճյուղի նվազման հիմնական պատճառը խեցեմորթների և կակղամորթների ենթադասի նվազումն է:



Նվազման հիմնական պատճառը այլ երկրների պահանջարկի նվազումն է: Արտահանումն այլ երկրներ նվազել է 51.3%-ով (արտահանումն ԱՊՀ երկրներ աճել է 2.2 անգամ):
- Մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում:** Ենթաճյուղին բացասաբար է ազդել «մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում չներառված ուրիշ խմբավորումներում» ենթաճյուղի 25.6% նվազումը:

Արտահանման աճ է գրանցվել և՛ ԱՊՀ և՛ այլ երկրների մասով, համապատասխանաբար 0.2% և 57.0%:
- Բուսական և կենդանական յուղերի և ճարպերի արտադրություն:** Բուսական յուղի (արևածաղկի) գինը 2014թ. համեմատ նվազել է 0.8%-ով, իսկ եգիպտացորենի, ձիթապտղի և այլ յուղերի գներն աճել են համապատասխանաբար 1.6%, 7.3% և 9.4%-ով: Արտադրանքն ամբողջությամբ սպառվում է ներքին շուկայում:
- Կաթնամթերքի արտադրություն:** Ենթաճյուղի 4.0% նվազմանը բացասաբար է ազդել «կաթի մշակում, կարագի և պանրի արտադրության» 4.5% նվազումը:

Արտադրության ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է ԱՊՀ երկրների կողմից պահանջարկի նվազմամբ (արտահանումը նվազել է 57.7%-ով): Ներքին շուկայում իրացումն աճել է 12.2%-ով:
- Ալրաղաց արդյունաբերության, օսլայի և օսլա պարունակող մթերքի արտադրություն:** Ենթաճյուղի 12.5% նվազմանը բացասաբար է ազդել 98.4% տեսակարար կշիռ ունեցող «ալյուրի արտադրություն» ենթախմբի 12.7% նվազումը (ծավարեղենի արտադրության ծավալներն աճել են 5.7%-ով):



Արտահանումը նվազել է ԱՊՀ և Այլ երկրների մասով համապատասխանաբար՝ 2.3% և 22.9%-ով: Ներքին շուկայում սպառումը նվազել է 24.0%-ով (միայն ալյուրինը՝ 24.4%-ով):
- Այլ սննդամթերքի արտադրություն:** Ենթաճյուղի 25.1% նվազմանը բացասաբար են նպաստել «շաքարի արտադրության» 48.9%, «կակաոյի, շոկոլադի և շաքարե հրուշակեղենի արտադրության» 14.7%, «աղի արտադրության» 7.4%, «այլ սննդամթերքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում» ենթաճյուղի 13.8% նվազումները:

➤ **ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Ենթաճյուղի արտադրության ծավալը 2014թ. համեմատ նվազել է 19.7%-ով, որը պայմանավորված է «կոնյակի (բրենդիի) արտադրություն» ենթաճյուղի 24.6%, «խաղողի գինու արտադրության»՝ 22.9%, «գարեջրի արտադրության» 12.8%, «բնական հանքային և այլ շշացված ջրերի արտադրության» 20.7%, «բուրավետացրած կամ քաղցրացրած ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության» 13.1% նվազումներով:



Խմիչքների արտահանման ծավալները դեպի ԱՊՀ երկրներ նվազել է 33.9%-ով, իսկ դեպի Այլ երկրներ աճել՝ 42.5%-ով, իսկ ներքին շուկայում սպառումը նվազել է 1.6%-ով:



➤ **ՀԻՄՆԱՅԻՆ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Ենթաճյուղի արտադրության ծավալը 2014թ. համեմատ նվազել է 15.0%-ով, որը պայմանավորված է «թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրության» 43.6%, «պողպատե խողովակների, սնամեջ տրամատների և համանման կցամասերի արտադրության» 27.4%, «պողպատի նախնական մշակում և այլ պողպատե արտադրատեսակների արտադրություն»՝ 31.5%, «մետաղների ձուլում»՝ 5.7% նվազմամբ: «թանկարժեք և հիմնական գունավոր մետաղների արտադրության» գծով գրանցվել է՝ 1.4% աճ:



- **Թանկարժեք և հիմնական գունավոր մետաղների արտադրություն:** Ենթաճյուղի աճին նպաստել են պղնձի արտադրության 19.6% և ալյումինի արտադրության 1.1% աճերը: Աճին զսպող ազդեցություն է ունեցել այլ գունավոր մետաղների արտադրության 33.3% նվազումը:
- **Պողպատի նախնական մշակում և այլ պողպատե արտադրատեսակների արտադրություն:** Ծավալների նվազումը պայմանավորված է «սառը դրոշմում և կամ ճկում» խմբի արտադրության ծավալների 31.8% նվազմամբ: Ներքին շուկայում խմբի իրացումը նվազել է 29.3%-ով, իսկ արտահանումն ավելացել է մոտ 3.3 անգամ: Աճ է գրանցվել մետաղալարի արտադրության և իրացման գծով (ամբողջությամբ սպառվել է ներքին շուկայում) համապատասխանաբար՝ 3.4 և 3.6 անգամ:
- **Թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն:** Ծավալների նվազումը պայմանավորված է դեպի այլ երկրներ արտահանման ծավալների 73.6% նվազմամբ: Ներքին շուկայում սպառումն աճել է:
- **Մետաղների ձուլում:** Ենթախմբի արտադրանքի ծավալների նվազումը պայմանավորված է պողպատի ձուլվածքի ծավալների 16.1% նվազմամբ: 2014թ. 12.7 մլն դրամի պողպատի ձուլվածքի արտահանման դիմաց 2015թ. արտահանում չի եղել, իսկ ներքին շուկայում սպառումը նվազել է 15.1%-ով:



➤ **ՊԱՏՐԱՍՏԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:**

Ենթաճյուղի արտադրության ծավալը 2014թ. համեմատությամբ նվազել է 24.6%-ով: Նվազումը պայմանավորված է ենթաճյուղում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող «մետաղե շինարարական կոնստրուկցիաների արտադրության» ծավալների 25.4% և «այլ պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրության» ծավալների 18.0% նվազմամբ: Մյուս ենթախմբերի գծով նույնպես գրանցվել է նվազում:



- **Մետաղե շինարարական կոնստրուկցիաների արտադրություն:** Նվազումը պայմանավորված է «մետաղե կոնստրուկցիաների և դրանց մասերի արտադրության» և «մետաղե դռների և լուսամուտների արտադրության» համապատասխանաբար 25.9% և 18.2% նվազմամբ: Նշված երկու խմբերի արտադրանքի ծավալների նվազումը պայմանավորված է ներքին շուկայում իրացման ծավալների, համապատասխանաբար 15.1% և 17.5% նվազմամբ (արտահանում չի եղել):
- **Այլ պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրություն:** Ենթաճյուղի նվազումը պայմանավորված է «այլ պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրություն չներառված ուրիշ խմբավորումներում» ենթախմբի արտադրության ծավալների 28.0% և «մետաղալարե արտադրատեսակների, շղթաների, զսպանակների արտադրության» ենթախմբի 11.0% նվազմամբ: Մյուս ենթախմբերի գծով գրանցվել է աճ:

➤ **ԱՅԼ ՈՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Ենթաճյուղի արտադրության ծավալը 2014թ. համեմատ նվազել է 16.2% -ով, որը հիմնականում պայմանավորված է 41.3% տեսակարար կշիռ ունեցող «ցեմենտի, կրի, գիպսի և գաջի արտադրության» ենթախմբի 1.2%, 28.7% տեսակարար կշիռ ունեցող «բետոնից, ցեմենտից և գիպսից շինվածքների արտադրություն» ենթախմբի 29.8% և 19.9% տեսակարար կշիռ ունեցող «ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն» ենթախմբի 28.6% նվազմամբ: «քարի սղոցում, մշակում և հարդարում» ենթախմբում, որի տեսակարար կշիռը կազմում է 7.7%, գրանցվել է 7.7% աճ:



- 23.1 Ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն
- 23.2 Հրահեստ արտադրատեսակների արտադրություն
- 23.3 Կավե շինանյութի արտադրություն
- 23.4 Այլ ճեմապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն
- 23.5 Ցեմենտի, կրի, գիպսի և գաջի արտադրություն
- 23.6 Բետոնից, ցեմենտից և գիպսից շինվածքների արտադրություն
- 23.7 Քարի սղոցում, մշակում և հարդարում


- **Ցեմենտի, կրի, գիպսի եվ գաջի արտադրություն:** Ենթաճյուղի ծավալների նվազումը պայմանավորված է 2014թ. համեմատ ցեմենտի արտադրության ծավալների պահպանմամբ և կրի, գիպսի և գաջի արտադրության ծավալների 9.4% նվազմամբ:

Նախորդ տարվա համեմատ 2015թ. 94.3%-ով նվազել է դեպի ԱՊՀ երկրներ ցեմենտի արտահանումը, իսկ ներքին շուկայում սպառումը աճել է 19.8%-ով: Կիրը, գիպսը և գաջն ամբողջությամբ սպառվել են ներքին շուկայում՝ նվազելով 11.1%-ով: Ներքին շուկայում իրացման ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է շինարարության նախորդ տարվա համեմատ ցածր աճով:

- **Բետոնից, ցեմենտից և գիպսից շինվածքների արտադրություն:** Ենթախմբի ծավալների նվազումը պայմանավորված է «բետոնե որմնաբլոկների արտադրության» ծավալների 11.4% նվազմամբ (ամբողջությամբ իրացվել է ներքին շուկայում՝ նվազելով 21.2%-ով): Ի հակադրություն վերջինիս, «բետոնե շինվածքների արտադրության» ծավալներն ավելացել են 16.0%-ով: Արտադրանքն ամբողջությամբ իրացվել է ներքին շուկայում՝ 2014թ. համեմատ իրացման ծավալներն աճել են 3.3 անգամ: «Ապրանքային բետոնի» արտադրության ծավալները նվազել են 44.3%-ով (ամբողջությամբ իրացվել է ներքին շուկայում՝ նվազելով 17.4%-ով): «Բետոնից, գիպսից և ցեմենտից այլ շինվածքների» արտադրության ծավալներն աճել են 3.5 անգամ, ամբողջությամբ իրացվել ներքին շուկայում՝ ապահովելով իրացման 3.4 անգամ աճ:

- **Ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն:** Ենթախմբի ծավալների նվազումը պայմանավորված է ենթախմբի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող «սնամեջ ապակե արտադրատեսակների» արտադրության ծավալների 29.6% նվազմամբ: Դեպի ԱՊՀ երկրներ արտահանումը նվազել է 46.7%-ով, իսկ դեպի այլ երկրներ՝ 78.6%-ով, իսկ ներքին շուկայում իրացումը նվազել է 38.8%-ով: Աճ է գրանցվել ենթախմբում 0.5% տեսակարար կշիռ ունեցող «այլ ապակե արտադրատեսակների արտադրություն, ներառյալ տեխնիկական ապակե ամանեղենի արտադրության»՝ 2.9 անգամ և 0.06% տեսակարար կշիռ ունեցող «այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների» գծով՝ 2.3 անգամ, մյուս առավել փոքր՝ 0,07-0.1% տեսակարար կշիռ ունեցող ենթադասերի գծով գրանցվել է 35-53% նվազում:

- **ՌԵՏԻՆԵ ԵՎ ՊԼԱՍՏՄԱՍՍԱՅԵ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Ենթաճյուղի արտադրության ծավալը 2014թ. համեմատ նվազել է 9.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է ենթաճյուղում 97.2% տեսակարար կշիռ ունեցող «պլաստմասսայե արտադրատեսակների» արտադրության 8.8% նվազմամբ: «Ռետինե արտադրատեսակների» արտադրության ծավալները նվազել են 16.6%-ով:





• **Պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն:** Ենթախմբի ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է ենթախմբի բոլոր արտադրատեսակների արտադրությունների ծավալների կրճատմամբ, հատկապես՝ 38.1% տեսակարար կշիռ ունեցող «այլ պլաստմասսայե արտադրատեսակների արտադրության» ծավալների 7.7%, 33.7% տեսակարար կշիռ ունեցող «շինարարական պլաստմասսայե արտադրատեսակների արտադրության» ծավալների 8.6% և 22.0% տեսակարար կշիռ ունեցող «պլաստմասսայե սալերի, թերթերի, խողովակների և տրամատների արտադրության» 11.7% նվազմամբ: 2015թ. 2014թ. համեմատ «պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը» բնեղեն արտահայտությամբ նվազել է 8.0%-ով, իսկ գները նվազել են 0.9%-ով: 2014թ. պաշարների առկայության պայմաններում նվազել են արտադրության ծավալները. դա է վկայում պլաստմասսայե արտադրատեսակների ներքին շուկայում իրացման ծավալների նվազումը 4.8%-ով, արտահանումը դեպի ԱՊՀ երկրներ աճել է 6.7 անգամ, դեպի այլ երկրներ նվազել է 22.7%-ով: Պլաստմասսայե արտադրատեսակները հիմնականում սպառվում են ներքին շուկայում և այլ երկրներում:

• **Ռեզիստիվ արտադրատեսակների արտադրություն:** Ենթախմբի ծավալների նվազումը պայմանավորված է ենթախմբի «այլ ռեզիստիվ արտադրատեսակների» արտադրության 16.6% նվազմամբ, որը 90%-ից ավելի սպառվում է ներքին շուկայում:

➤ **ՄԱՆԱԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Ենթաճյուղի արտադրության ծավալը 2015թ. 2014թ. համեմատ նվազել է 13.3%-ով, որը հիմնականում պայմանավորված է ենթաճյուղում 78.2% տեսակարար կշիռ ունեցող այլ մանածագործական արտադրատեսակների արտադրության 18.5% նվազմամբ, որը չեզոքացրել է ենթաճյուղում 21.6% տեսակարար կշիռ ունեցող մանածագործվածքի արտադրության 14.0% աճը:

Ենթաճյուղում աննշան 0.2% տեսակարար կշիռ ունեցող մանածագործական թելքի նախապատրաստումը և մանումը նվազել է 58.7%-ով:



- Այլ մանածագործական արտադրատեսակների արտադրություն:** Ենթախմբի ծավալների նվազումը պայմանավորված է հիմնականում ենթախմբում 44.3% տեսակարար կշիռ ունեցող «գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրության» 0.7% նվազմամբ և 30.5% տեսակարար կշիռ ունեցող «մեքենայական կամ ձեռքի հյուսքի տրիկոտաժե գործվածքի արտադրության» 50.8% նվազմամբ: 22.8% տեսակարար կշիռ ունեցող «ուրիշ խմբավորումներում չներառված այլ մանածագործական արտադրատեսակների արտադրանքի» 63.9% և 2.3% տեսակարար կշիռ ունեցող «տեխնիկական և արդյունաբերական նշանակության այլ մանածագործական արտադրատեսակների արտադրության» 8.5% աճերի ազդեցությունները էական չեն եղել:



Արտադրատեսակը իրացվում է մեծամասամբ ներքին շուկայում, իրացումն աճել է 21.0%-ով, իսկ դեպի այլ երկրներ արտահանումը նվազել է 49.8%-ով: Դեպի Այլ երկրներ արտադրատեսակի արտահանման նվազումը պայմանավորված է պահանջարկի փոփոխություններով:

- Մանածագործվածքի արտադրություն:** Ենթախմբի աճը պայմանավորված է հիմնականում կառուցվածքում 80.2% տեսակարար կշիռ ունեցող «բամբակե գործվածքի արտադրության» 20.4% աճով:



- ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Ենթաճյուղի աճը պայմանավորված է «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն» ենթախմբի 44.8% (արտադրանքի 67.0%-ը սպառվում է այլ երկրներում, 25.1%-ը՝ ներքին շուկայում և 6.0%-ը՝ ԱՊՀ երկրներում) և «ծխախոտի խմորում

(ֆերմենտացիա)» ենթախմբի 45.2 անգամ աճերով (ամբողջությամբ սպառվում է ներքին շուկայում):

Ենթաճյուղի արտադրանքի 67.4%-ը սպառվում է Այլ երկրներում, 26.8%-ը՝ ներքին շուկայում և 5.8%-ը՝ ԱՊՀ երկրներում:





➤ **ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Ենթաճյուղի աճը պայմանավորված է «հիմնային քիմիական նյութերի, պարարտանյութերի և ազոտական միացությունների, նախնական ձևերով պլաստմասսաների և սինթետիկ կաուչուկի» ենթախմբի 57.5% (արտադրանքի 75.3%-ը սպառվում է ներքին շուկայում, 19.7%-ը՝ ԱՊՀ երկրներում, 5.0%-ը՝ այլ երկրներում) և «այլ քիմիական նյութերի արտադրություն» ենթախմբի 16.3% աճերով: Ենթաճյուղի արտադրանքի 90.2%-ը սպառվում է ներքին շուկայում, 5.7%-ը՝ ԱՊՀ երկրներում և 4.1%-ը՝ Այլ երկրներում:



- **ՀԱԳՈՒՍՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Ենթաճյուղի աճը պայմանավորված է «հագուստի արտադրություն, բացի մորթե հագուստից» ենթախմբի 7.2% (արտադրանքի 54.6%-ը սպառվում է ներքին շուկայում, 41.7%-ը՝ այլ երկրներում և 3.7%-ը՝ ԱՊՀ երկրներում) և «տրիկոտաժե արտադրատեսակների արտադրություն» ենթախմբի 68.2% (արտադրանքի 62.4%-ը սպառվում է ներքին շուկայում, 32.4%-ը՝ ԱՊՀ երկրներում և 5.2%-ը՝ այլ երկրներում) աճերով: Ենթաճյուղի արտադրանքի 56.1%-ը սպառվում է ներքին շուկայում, 34.8%-ը՝ Այլ երկրներում և 9.1%-ը՝ ԱՊՀ երկրներում:



- **ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Ենթաճյուղի աճը պայմանավորված է «հիմնային դեղագործական մթերքի արտադրություն» ենթախմբի 16.6% (արտադրանքի 54.6%-ը սպառվում է ներքին շուկայում, 41.7%-ը՝ Այլ երկրներում և 3.7%-ը՝ ԱՊՀ երկրներում) և «դեղագործական պատրաստուկների և նյութերի արտադրություն» ենթախմբի 28.4% (արտադրանքի 48.2%-ը սպառվում է ներքին շուկայում, 31.5%-ը՝ այլ երկրներում և 20.3%-ը՝ ԱՊՀ երկրներում) աճերով: Ենթաճյուղի արտադրանքի 47.1%-ը սպառվում է ներքին շուկայում, 29.6%-ը՝ ԱՊՀ երկրներում և 23.3%-ը՝ Այլ երկրներում:



**ԵՏՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
2015թ.**

ԵՏՄ

2015թ. ԵԱՏՄ տարածաշրջանում արդյունաբերությունը կրճատվել է 3.4%-ով, ընդ որում՝ մշակող արդյունաբերությունը կրճատվել է 5.3%-ով, իսկ էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի արտադրության և մատակարարման ենթաճյուղը կրճատվել է 1.7%-ով::

Ռուսաստանի Դաշնություն

Արդյունաբերության 3.4%-ով նվազմանը հիմնականում նպաստել են մշակող արդյունաբերության 5.4% և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի արտադրության և մատակարարման 1.6% նվազումը, իսկ հանքագործական արդյունաբերությունում արձանագրվել է 0.3% աճ: Նվազել են մշակող արդյունաբերության գրեթե բոլոր ենթաճյուղերը, միայն երեք ենթաճյուղերում են աճեր արձանագրվել, մասնավորապես, քիմիական արդյունաբերություն՝ 6.3%, սննդամթերքի արտադրություն ներառյալ խմիչք և ծխախոտ՝ 2.0% և ածխի և նավթամթերքի արտադրություն՝ 0.3%: Նվազել են մշակող արդյունաբերության գրեթե բոլոր ենթաճյուղերը, միայն երեք ենթաճյուղերում են աճեր արձանագրվել, մասնավորապես, քիմիական արդյունաբերություն՝ 6.3%, սննդամթերքի արտադրություն ներառյալ խմիչք և ծխախոտ՝ 2.0% և ածխի և նավթամթերքի արտադրություն՝ 0.3%:

Բելառուսի Հանրապետություն

2015թ. նվազում է գրանցվել արդյունաբերության բոլոր ենթաճյուղերում, մասնավորապես, հանքարդյունաբերությունը նվազել է 7.8%-ով, մշակող արդյունաբերությունը՝ 7.1%-ով, իսկ էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի արտադրությունը և մատակարարումը՝ 2.4%-ով: Մշակող արդյունաբերության գրեթե բոլոր ենթաճյուղերում էլ գրանցվել է նվազում: Աճ է արձանագրվել միայն հետևյալ ենթաճյուղերում՝ դեղագործական արդյունաբերություն՝ 38.5%, քիմիական արդյունաբերությունը 6.3% և ածխի ու նավթամթերքի արտադրություն՝ 0.3%:

Ղազախստանի Հանրապետություն

2015թ. Ղազախստանի արդյունաբերության 1.6% նվազմանը նպաստել են արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերում արձանագրված նվազումները, մասնավորապես, հանքարդյունաբերությունը նվազել է 2.5%-ով, էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման ենթաճյուղը՝ 1.6%-ով, իսկ ջրամատակարարման ենթաճյուղը 8.9%-ով: Մշակող արդյունաբերության ենթաճյուղում արձանագրվել է 0.2% աճ: Մշակող արդյունաբերության մեջ կրճատվել են խմիչքների արտադրությունը 1.9%-ով, ծխախոտի արտադրությունը 14.7%-ով, ածխի և նավթամթերքի արտադրությունը 3.2%-ով, պատրաստիմետաղական արտադրատեսակների արտադրությունը, բացի մեքենաներից և սարքավորումներից՝ 3.3%-ով: Մյուս բոլոր ճյուղերում արձանագրվել են աճեր, մասնավորապես, մետաղական արդյունահանումը աճել է 14.4%-ով, հանքային արդյունահանումը աճել է 4.8%-ով, թեթև արդյունաբերությունը աճել է 3.4%-ով, իսկ քիմիական արդյունաբերությունը աճել է 2.6%-ով: Հանքարդյունաբերության ճյուղում նվազել են բոլոր ենթաճյուղերը, բացառությամբ բնական գազի արդյունահանման և մետաղների արդյունահանման, որտեղ արձանագրվել են աճեր, համապատասխանաբար 6.9% և 4.6%:


Ղրղզստանի Հանրապետություն

2015թ. արդյունաբերությունը նվազել է 4.4%-ով:

Մշակող արդյունաբերությունը նվազել է 2.8%-ով: Մշակող արդյունաբերության ճյուղում նվազել է քիմիական արտադրանքի արտադրությունը 46.4%-ով, տրանսպորտային միջոցների արտադրությունը 29.5%-ով, մեքենաների և սարքավորանքի արտադրությունը 25.9%-ով, տեքստիլ արտադրությունը 11.3%-ով, հիմնային մետաղների արտադրությունը 8.5%-ով և սննդամթերքի, խմիչքների ու ծխախոտի արտադրությունը 6.7%-ով: Աճ է արձանագրվել համակարգչային, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրության ենթաճյուղում՝ 83.9%, մաքրված նավթամթերքի արտադրության ենթաճյուղում՝ 73.5% և դեղագործական արտադրանքի ենթաճյուղում 36.2%: Աճ է արձանագրվել հանքագործական արդյունաբերության ճյուղում՝ 63.8%-ով, որին գլխավորապես նպաստել են մետաղական խարամի արդյունահանման 3.8 անգամ և նավթի ու բնական գազի արդյունահանման 28.8%-ով աճերը:

3 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծառայությունների աճը կազմել է 2.7%, որին հիմնականում նպաստել են կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող «ֆինանսական և ապահովագրական գործունեության ծառայությունների» 3.6% և «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ծառայության տեսակի 68.1% աճը:



Ծառայությունների ծավալի նվազում է գրանցվել «կազմություն և հանրային սննդի կազմակերպում»՝ -1.3%, «կրթություն»՝ -1.6%, «առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում»՝ -3.7%, «տեղեկատվություն և կապ»՝ -2.7%, «տրանսպորտ»՝ -19.9%, «վարչարարական և օժանդակ գործունեություն»՝ 5.6%, «մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն»՝ -0.5% ծառայությունների գծով:

Չնայած այն հանգամանքին, որ ծառայությունների որոշ բաժիններում գրանցվել են նվազումներ, վերջիններիս ենթադասերում առկա են աճ գրանցած ծառայության տեսակներ: Մասնավորապես «I կազմության և հանրային սննդի կազմակերպում» ծառայության տեսակի 0.3%-ով նվազման պարագայում «I 55 կազմության կազմակերպում» ենթատեսակում գրանցել է 5.7% աճ, «J տեղեկատվություն և կապ» -ի 2.7%-ով նվազման պարագայում «J 62.63 տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական ծառայություններ» ենթատեսակում գրանցվել է 14.5% աճ, «H տրանսպորտ»-ի 19.9% նվազման պարագայում «H 53 փոստային և սուրհանդակային ծառայությունների» աճը կազմել է 54.8%:

2010թ. համեմատ 2015թ. ծառայությունների ծավալն աճել է 1.4 անգամ: Ծառայությունների կառուցվածքում առավելապես ավելացել են «կազմություն և հանրային սննդի կազմակերպում», «մշակույթ, զվարճություններ, հանգիստ» և «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ծառայությունների մասնաբաժինները, համապատասխանաբար՝ 2.6; 11.5 և 2.3 տոկոսային կետով:

3.1 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՏՀՏ ՈԼՈՐՏԻ ԾԱՎԱԼ ԵՎ ԱՃ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆԿԱՏՄԱՄԲ

	2010	2011	2012	2013	2014	2015
SՀՏ ոլորտի ծավալ, մլրդ դրամ						
SՀՏ, այդ թվում	193.8	197.2	213.9	234.4	233.8	235.4
արտադրություն	2.7	1.7	1.9	2.3	2.1	2.0
առևտուր	10.3	16.0	22.0	29.2	27.1	31.0
ծառայություններ, որից՝	180.8	179.4	190.0	202.9	204.7	202.3
հեռահաղորդակցություն	162.3	158.7	165.2	173.7	171.6	160.2
SՀՏ ոլորտի աճ, %						
SՀՏ, այդ թվում	1.3	1.4	6.8	11.7	-0.5	-0.7
արտադրություն	-53.3	-4.5	-3.1	18.7	-0.3	-4.5
առևտուր	0.4	2.9	31.4	25.7	-9.3	8.5
ծառայություններ, որից՝	3.0	1.4	4.7	10	0.8	-1.9
հեռահաղորդակցություն	3.7	0.0	3.1	10.0	-1.2	-6.7

Տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի ցուցանիշի նվազումը հիմնականում պայմանավորված է ծառայություններում գերակշիռ մասնաբաժին ունեցող հեռահաղորդակցության ծառայությունների ծավալի 6.7% նվազմամբ: 2014թ. համեմատ արտադրությունը նվազել է 4.5%-ով, իսկ առևտուրն աճել 8.5%-ով:

Ըստ «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի» կողմից հրապարակված «SS ոլորտը Հայաստանում 2015թ.» Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտության¹ տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների ծավալն աճել է 14.5%-ով: 2015 թվականը տեղեկատվական տեխնոլոգիաների /SS/ ոլորտի համար հաջող տարի էր: SS ոլորտի հետազոտության արդյունքների համաձայն՝ ոլորտում ակտիվ աշխատում են ավելի քան 450 ընկերություններ, ոլորտում ներգրավված է մոտ 13000 մասնագետ, ոլորտի ընդհանուր շրջանառությունը կազմում է շուրջ 550 մլն ԱՄՆ դոլար, աճը կազմել է ավելի քան 17%:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ցուցանիշներ

	2010	2011	2012	2013	2014	2015
Գործող ընկերությունների քանակը	197	281	360	380	396	450
Տեղական ընկերություններ	125.0	174	209	225	239	288
Արտասահմանյան մասնաճյուղեր	72	107	151	155	157	162
Զբաղվածների թիվը, մարդ	4960	6760	9354	10740	11564	12685
Տեղական ընկերություններ	2130	3154	4276	4878	5143	6073
Արտասահմանյան մասնաճյուղեր	2830	3606	5078	5682	6421	6612
Արտադրանքի ծավալը, մլն ԱՄՆ դոլար	148.8	205.1	320.9	379.1	479.4	559.1
Տեղական ընկերություններ	57.8	87.0	107.7	145.4	180.9	265.2
Արտասահմանյան մասնաճյուղեր	91.1	118.1	213.2	233.7	294	293.9
Արտահանումը, մլն ԱՄՆ դոլար	58.2	89.7	119.6	133.4	153.2	214.4


¹ <http://www.eif.am/arm/researches/report-on-the-state-of-the-industry/>

3.2 ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին հանրապետություն են ժամանել 1192,1 հազար միջազգային զբոսաշրջիկ, 2014թ. համեմատ ցուցանիշը նվազել է 1.0%-ով: Զբոսաշրջության նպատակով Հայաստանից մեկնել են 1187.4 հազար մարդ կամ 2014թ. համեմատ ցուցանիշը նվազել 0.9%-ով: 2015թ. ընթացքում ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակի նվազումը հիմնականում պայմանավորված է Ռուսաստանի Դաշնությունից և Վրաստանից այցելությունների նվազմամբ՝ համապատասխանաբար 6.0 և 11.0%-ով (ընդհանուր շուրջ 60000-ով):

Միջազգային զբոսաշրջություն						
	2010	2011	2012	2013	2014	2015
Զբոսաշրջիկների թվաքանակ, հազար մարդ						
Ժամանողներ	684.0	757.9	843.3	957.2	1203.7	1192.1
Մեկնողներ	640.0	715.0	806.5	906.2	1198.1	1187.4
Զբոսաշրջիկների թվաքանակի աճ, %						
Ժամանողներ	18.9	10.3	11.3	13.5	11.3	-1.0
Մեկնողներ	21.6	10.2	12.8	12.3	10.9	-0.9


Ներքին զբոսաշրջություն. 2015թ. հանրապետության տարածքում հյուրանոցային տնտեսության օբյեկտներում տեղաբաշխված զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 871 888 մարդ (<< ռեզիդենտներ), ինչը 2014թ. համեմատ աճել է 1.4%-ով: Նվազել է գործնական նպատակներով զբոսաշրջիկների թիվը՝ 16.5%-ով և բուժման նպատակով՝ 24.5%-ով: Աճ է գրանցվել հանգստի և ժամանցի ու այլ նպատակներով այցելած զբոսաշրջիկների թվաքանակում համապատասխանաբար՝ 9.4 և 24.7%-ով:



4 ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

2015թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 4.7 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ նվազելով 20.6%-ով, արտահանումը նվազել է 3.9%-ով, իսկ ներմուծումը՝ 26.5%-ով:


Արտահանումը և ներմուծումը ՀՆԱ նկատմամբ, %




	2010	2011	2012	2013	2014	2015
Արտաքին առևտրի ծավալ, մլն ԱՄՆ դոլար						
Ապրանքների արտահանում	1041.1	1334.3	1380.2	1480.0	1547.3	1486.9
Ապրանքների ներմուծում	3749.0	4145.3	4261.2	4476.8	4424.4	3254.0
Առևտրաշրջանառություն	4790.0	5479.7	5641.4	5956.8	5971.7	4740.9
Առևտրի հաշվեկշիռ	-2707.9	-2811.0	-2881.0	-2996.8	-2877.1	-1767.1
Արտաքին առևտրի աճ, %						
Ապրանքների արտահանում	46.6	28.2	3.4	7.2	2.7	-3.9
Ապրանքների ներմուծում	12.9	10.6	2.8	5.1	0.4	-26.5
Առևտրաշրջանառություն	18.8	14.4	3.0	5.6	1.0	-20.6

2015թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը կրճատվել է վերջինիս կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող հիմնական գործընկեր երկրների գծով: Արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում ավելացել է ԱՊՀ երկրների և Այլ երկրների մասնաբաժինը և կրճատվել է ԵՄ երկրների մասնաբաժինը:



Առևտրաշրջանառության աճ, %



Արտաքին առևտրաշրջանառության կառուցվածք, %



Արտահանում: 2015թ. ՀՀ արտահանումը նվազել է 3.9%-ով, դեպի ԱՊՀ երկրներ և ԵՄ երկրներ արտահանումը նվազել է համապատասխանաբար 25.3% և 5.2%-ով, իսկ դեպի Այլ երկրներ արտահանումն աճել է 7.5%-ով:



ԱՊՀ երկրներ արտահանման նվազումը պայմանավորված է դեպի ՌԴ արտահանման (արտահանման կառուցվածքում 15.2%) 26.7%-ով նվազմամբ: Նվազել է արտահանումը նաև դեպի Բելառուս և Ղազախստան համապատասխանաբար՝ 40.1% և 49.6%-ով, իսկ Թուրքմենստան արտահանումը աճել է 17.8%-ով:

ԵՄ երկրներ արտահանման 5.2% նվազումը պայմանավորված է այս խմբում մեծ մասնաբաժին ունեցող երկրներ արտահանման նվազմամբ, մասնավորապես, Գերմանիա (արտահանման կառուցվածքում 9.8%)՝ -8.5%, Բուլղարիա (արտահանման կառուցվածքում՝ 5.3%)՝ -7.8%, Բելգիա (արտահանման կառուցվածքում 3.2%)՝ -23.7% և Նիդեռլանդներ (արտահանման կառուցվածքում՝ 3.2%)՝ -46.4%: Սակայն նշվածին զուգահեռ արտահանման աճ է արձանագրվել դեպի Հունաստան՝ 9.0 անգամ, Դանիա՝ 8.0 անգամ, Միացյալ Թագավորություն՝ 3.1 անգամ, Իսպանիա՝ 3.1 անգամ, Հունգարիա՝ 90.1%-ով, Ավստրիա 45.6%-ով, Իտալիա՝ 42.0% և Ֆրանսիա 20.3%-ով: 2014թ. արտահանման կառուցվածքում գրեթե զրոյական մասնաբաժին ունեցող Ռումինիայի մասը 2015թ. արտահանման կառուցվածքում կազմել է 2.6%:

Այլ երկրներ արտահանման աճը կազմել է 7.5%, այս խմբում մեծ մասնաբաժին ունեցող երկրներ արտահանման աճը, մասնավորապես դեպի Իրաք (արտահանման կառուցվածքում՝ 8.8%) արտահանումը աճել է 62.0%, Վրաստան (արտահանման կառուցվածքում՝ 7.8%)՝ 37.6%, Կանադա (արտահանման կառուցվածքում՝ 7.5%)՝ 20.3%:


Ըստ ապրանքային բաժինների արտահանման «հանքահումքային արտադրանքի» արտահանումը 2015թ. աճել է 19.9%-ով: Նախորդ տարվա համեմատ 62.9%-ով աճել է նաև «մանածագործական իրերի» արտահանումը: Կառուցվածքում մեծ մասնաբաժին ունեցող

մյուս բոլոր խոշոր ճյուղերում արձանագրվել է արտահանման նվազում: Մասնավորապես, արտահանման կառուցվածքում մեծությամբ երկրորդ՝ «պատրաստի սննդի արտադրանքի» արտահանումը նվազել է 8.9%-ով, «ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի» արտահանումը՝ 24.1%-ով, «թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի» արտահանումը՝ 10.6%-ով:


Արտահանվող հիմնական ապրանքատեսակները, որոնք ունեն առավել բարձր մաքսային արժեք, ապահովելով ծավալային աճ, արժեքային արտահայտությամբ կամ զիջել են ծավալի աճի տեմպերին, կամ արձանագրել նվազում: Օրինակ՝ պղնձի խտանյութ (բնեղեն ծավալի աճը կազմել է 67.0%, իսկ արժեքային աճը՝ 34.2%), պղինձ (բնեղեն ծավալի աճը կազմել է 18.2%, իսկ արժեքայինը նվազել է 8.7%-ով), պանիր (բնեղեն ծավալի աճը կազմել է 5.8 անգամ, իսկ արժեքային աճը՝ 4.8 անգամ), պահածոներ (բնեղեն ծավալի աճը կազմել է 2 անգամ, իսկ արժեքայինը նվազել է՝ 17.2%-ով):

Ներմուծում: 2015թ. ՀՀ ներմուծումը նվազել է 26.5%-ով, ընդ որում նվազել է ներմուծումը ԱՊՀ երկրներից 18.5%-ով, ԵՄ երկրներից՝ 31.3%-ով և Այլ երկրներից՝ 29.2%-ով:

Ներմուծման կառուցվածքն ըստ երկրների, %



Ներմուծման ապրանքային կառուցվածք, %



ԱՊՀ երկրներից ներմուծման նվազումը պայմանավորված է Ռուսաստանից (ներմուծման կառուցվածքում 29.1%) և Ուկրաինայից (ներմուծման կառուցվածքում 3.8%) ներմուծման նվազմամբ համապատասխանաբար 15.6% և 38.2%-ով: ԵԱՏՄ անդամ պետություններ հանդիսացող Բելառուսից ներմուծումը աճել է 8.9%, իսկ Ղազախստանից՝ նվազել է 47.4%-ով:

ԵՄ երկրներից ներմուծումը նվազել է 31.3%-ով, որին նպաստել է գրեթե բոլոր խոշոր գործընկեր երկրներից ներմուծման նվազումը, մասնավորապես՝ Գերմանիա (ներմուծման կառուցվածքում՝ 6.2%)՝ -28.7%, Իտալիա (ներմուծման կառուցվածքում՝ 4.6%)՝ -17.4%, Ֆրանսիա (ներմուծման կառուցվածքում՝ 2.0%)՝ -18.4% և Բելգիա (ներմուծման կառուցվածքում՝ 1.5%)՝ -44.5%: ԵՄ երկրներից ներմուծումը աճել է միայն Դանիայից՝ 27.1%,

Լիտվայից՝ 8.0%, Հունաստանից՝ 7.3%, Բուլղարիայից՝ 2.0% և Չեխիայից՝ 0.6%, որոնք ԵՄ երկրներից ներմուծման կառուցվածքում միասին կազմում են 2.2%:

Այլ երկրներից ներմուծումը կրճատվել է 29.2%-ով, որտեղ արձանագրվել է բոլոր գործընկեր երկրներից ներմուծման կրճատում: Մասնավորապես՝ Չինաստանից (ներմուծման կառուցվածքում 9.7%) ներմուծումը կրճատվել է 24.2%-ով, Իրանից (ներմուծման կառուցվածքում 6.1%)՝ 3.9%-ով, Թուրքիայից (ներմուծման կառուցվածքում 4.2%)՝ -41.0%, ԱՄՆ-ից (ներմուծման կառուցվածքում 3.3%)՝ 18.5%-ով և Վրաստանից (ներմուծման կառուցվածքում 2.1%)՝ 7.1%-ով:

Ըստ ապրանքային բաժինների ներմուծման մեջ մեծ մասնաբաժին ունեցող ապրանքների գծով արձանագրվել է նվազում, մասնավորապես, «հանքահումքային արտադրանքի» ներմուծումը նվազել է 24.9%-ով, «մեքենաների, սարքավորումների և մեխանիզմների» ներմուծումը նվազել է 29.6%-ով, «պատրաստի սննդի արտադրանքի» ներմուծումը՝ 12.0%-ով, «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի» ներմուծումը՝ 14.5%-ով, «ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի» ներմուծումը՝ 22.6%-ով:


Ներմուծման անվանացանկում գրեթե բոլոր ապրանքներով արձանագրվել է ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի նվազում: Այդ թվում՝ մի շարք ապրանքներ, ապահովելով ներմուծման ծավալների աճ, արձանագրել են արժեքային ցուցանիշների ավելի ցածր աճի տեմպեր կամ անկում: Օրինակ՝ ալյումին անմշակ (բնեղեն ծավալի աճը կազմել է 2.5%, իսկ արժեքային աճը՝ 0.8%), պարարտանյութ (բնեղեն ծավալի աճը կազմել է 35.4%, իսկ արժեքային աճը՝ 22.3%), ձողեր երկաթից (բնեղեն ծավալի աճը կազմել է 2 անգամ, իսկ արժեքայինը նվազել է 48.4%), դեղամիջոցներ (բնեղեն ծավալի աճը կազմել է 2,5 անգամ, իսկ արժեքայինը նվազել է 6.8%-ով), մետաղակոնստրուկցիա (բնեղեն ծավալի աճը կազմել է 52.2%, իսկ արժեքային նվազել է 21.4%): Նշենք նաև, որ մի շարք ապրանքներ, որոնք արձանագրելով ներմուծման բնեղեն ծավալների որոշակի նվազում, արժեքայինով արձանագրել են ավելի բարձր նվազում: Դրանք են՝ նավթամթերք (բնեղեն ծավալը նվազել է 8.3%-ով, իսկ արժեքայինը՝ 34.0%-ով), ցորեն (բնեղեն ավալը նվազել է 5.0%-ով, իսկ արժեքայինը՝ 24.8%-ով), թռչնի միս և մսամթերք (բնեղեն ծավալը նվազել է 7.3%, իսկ արժեքայինը՝ 29.1%-ով), թուղթ և ստվարաթուղթ (բնեղեն ծավալը նվազել է 8.3%-ով, իսկ արժեքայինը՝ 20.5%-ով):

5 ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ


2015թ. տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը (առանց պետական կառավարման և բանկային համակարգով ստացվածի) կազմել է 123.6 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումների ծավալը՝ 70.4 մլրդ դրամ:

Ըստ երկրների 2015թ. Արգենտինայից ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է 47.1 մլրդ դրամ, ուղղակի ներդրումների ծավալը՝ 12.5 մլրդ դրամ, Շվեյցարիայից օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է 43.1 մլրդ դրամ, ուղղակի ներդրումների ծավալը՝ 41.1 մլրդ դրամ, Ռուսաստանի Դաշնությունից օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը՝ 31.99 մլրդ դրամ, ուղղակի ներդրումներինը՝ 35.98 մլրդ դրամ, Լյուքսեմբուրգից օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը՝ 28.4 մլրդ դրամ, ուղղակի ներդրումներինը՝ 28.7 մլրդ դրամ, Գերմանիայից օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը՝ 26.8 մլրդ դրամ, ուղղակի ներդրումներինը՝ -0.6 մլրդ դրամ: Միացյալ Թագավորությունից ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է -35.7 մլրդ դրամ, ուղղակի ներդրումների ծավալը՝ -34.7 մլրդ դրամ, Ֆրանսիայից օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը՝ -34.5 մլրդ դրամ, ուղղակի ներդրումներինը՝ -33.98 մլրդ դրամ:

Իրական հատվածում կատարված օտարերկրյա ընդամենը ներդրումների զուտ հոսքերի կառուցվածքն ըստ երկրների




Իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերի կառուցվածքն ըստ երկրների




Ըստ գործունեության տեսակների ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումներից 56.5 մլրդ դրամն ուղղվել է «հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր» (կառուցվածքում՝ 45.7%), որից՝ 26.5 մլրդ դրամ ուղղակի ներդրումներ, «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման» ճյուղում՝ 51.0 մլրդ դրամ (կառուցվածքում՝ 41.3%), որից՝ 56.9 մլրդ դրամ ուղղակի ներդրումներ և «օդային տրանսպորտի գործունեության» ճյուղում՝ 34.5 մլրդ դրամ (կառուցվածքում՝ 27.9%):

Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերի կառուցվածքն ըստ գործունեության տեսակների



Օտարերկրյա ընդամենը ներդրումների զուտ հոսքերի կառուցվածքն ըստ գործունեության տեսակների



Օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերը «հեռահաղորդակցության» ճյուղում կազմել են՝ -30.5 մլրդ դրամ, որից՝ -30.0 մլրդ դրամ ուղղակի ներդրումներ, «հիմնային մետաղների արտադրության» ճյուղում՝ -29.4 մլրդ դրամ, որից -29.8 մլրդ դրամ ուղղակի ներդրումներ և «շենքերի շինարարությունում»՝ -26.1 մլրդ դրամ, որից 0.8 մլրդ դրամ ուղղակի ներդրումներ:

7 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔ

Պետական բյուջեի եկամուտների աճը 2014թ. համեմատությամբ կազմել է 0.9%, ծախսերինը՝ 10.7%: Բյուջեի պակասուրդը կազմել է 146.7 մլրդ դրամ:

«Վ պետական բյուջեի ցուցանիշներ, մլրդ ՀՀ դրամ»


	2010	2011	2012	2013	2014	2015
Եկամուտներ	780.4	880.9	946.2	1071.4	1137.1	1147.2
Ծախսեր	954.3	986.5	1006.1	1142.9	1168.9	1293.9
Պակասուրդ	-173.9	-105.7	-59.9	-71.5	-31.8	-146.7

Պետական բյուջեի հարկերի և տուրքերի գծով մուտքերի գծով աճը կազմել է 0.4%, այլ եկամուտներինը՝ 9.4%, իսկ պաշտոնական դրամաշնորհների գծով աճը կազմել է 3.6%:


Չնայած պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճին, հիմնական հարկատեսակների գծով 2014թ. համեմատ հավաքագրման նվազումներ են գրանցվել: Մասնավորապես ավելացված արժեքի հարկի գծով նվազումը կազմել է 3.7%, ակցիզային հարկի գծով՝ 3.1%, պետական տուրքի գծով՝ 17.5%, բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարների գծով՝ 11.1%, պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ 28.8%, հաստատագրված վճարների գծով՝ 36.1%:

Աճ է գրանցվել մաքսատուրքերի՝ 27.0%, եկամտային հարկի՝ 7.8%, որից՝ նպատակային սոցիալական վճարների գծով՝ 2.3 անգամ:

Հարկային եկամուտներ/ՀՆԱ, %




Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ, %



Պետական բյուջեի ծախսերից ընթացիկ ծախսերի գծով գրանցվել է 11.8% աճ: Ընթացիկ ծախսերից նվազում է գրանցվել միայն ներքին տոկոսավճարների գծով ծախսերի մասով՝ 2.7%-ով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով ծախսերը նվազել են 4.3%-ով: Ըստ գործառնական դասակարգման խմբերի պետական բյուջեի ծախսերի 39.5%-ով թերակատարում է գրանցվել միայն հիմնական բաժիններին չդասվող պահուստային

Ֆոնդերի գծով: Պետական բյուջեի 146.7 մլրդ դրամ պակասուրդի 96.6%-ը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրների հաշվին:

ՀՀ պետական պարտքը 2015թ. կազմել է 5071.0 մլն ԱՄՆ դոլար, որից արտաքին պարտքը՝ 4309.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներքինը՝ 761.5 մլն ԱՄՆ դոլար: 2014թ. համեմատ աճերը կազմել են համապատասխանաբար՝ 14.2%; 13.9% և 16.0%:



Արտաքին պարտքի 88.9%-ը կազմում է ՀՀ կառավարության պարտքը, որը 2014թ. համեմատ աճել է 14.6%-ով կամ 487.9 մլն ԱՄՆ դոլարով, իսկ ՀՀ կենտրոնական բանկի պարտքն աճել է 8.3%-ով կամ 36.4 մլն ԱՄՆ դոլարով:

Ներքին պարտքի գերակշիռ մասը կազմող (92.9%) ՀՀ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական պարտատոմսերի գծով պարտքը 2014թ. համեմատ աճել է 8.6%-ով կամ 92.9 մլն ԱՄՆ դոլարով, իսկ արտարժույթային պետական պարտատոմսերի գծով պարտքը՝ մոտ 1.4 անգամ կամ 57.2 մլն ԱՄՆ դոլարով: